№ 03 – 1007

27 MAR 2019 201

ՀՀ արդարադատության նախարար

Արտակ Զեյնալյանին

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8

Հարգելի՛ պարոն Զեյնալյան,

Տեղեկացնում ենք, որ 05.06.2018թ-ին կնքված Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի (հարկադիր աճուրդի միջոցով) «ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) սեփականության իրավունքով ձեռք է բերել ՀՀ ք.Սևան Կ.Դեմիրճյան 4/4 հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքը, որը համաձայն 12.05.2017թ-ին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրով (այսուհետ՝ Վարձակալության պայմանագիր) վարձակալված է ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի կողմից:

Հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 619 հոդվածի 1-ին կետը, ըստ որի՝ *Վարձակալության հանձնված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ վարձակալության պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով,*

խնդրում ենք Վարձակալության պայմանագրով սահմանված վճարները կատարել Բանկի 11800075866400 հաշվեհամարին:

Վարձակալության իրավահարաբերությունները շարունակելու անհնարինության դեպքում (ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակիցների բանավոր փոխանցմամբ անհնար է շարունակել իրավահարաբերություններն առանց պայմանագրի փոփոխության, մինչդեռ վերոնշյալ նորմը նախատեսում է նման հնարավորություն) հաշվի առնելով, որ Վարձակալության պայմանագիրը կնքվել է անորոշ ժամկետով և Վարձակալության պայմանագիրը դադարեցնելու համար տեղեկացման այլ ժամկետ սահմանված չէ, և առաջնորդվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612 հոդվածի 2-րդ կետով, խնդրում ենք սույն գրությունն ընդունել նաև որպես վարձակալության պայմանագրից միակողմանի հրաժարում, որի դեպքում Վարձակալության պայմանագիրը երեք ամիս հետո համարվում է դադարած:

Հարգանքով՝

Վարչության նախագահ Միհեր Աբրահամյան

Կատարող՝ Իրավաբանական վարչության
Ընդհանուր իրավախորհրդատվության և կորպորատիվ քարտուղարության բաժին
Հեռ. (010) 59 33 14

Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն
Մուտք № 10416-19
«29» 03 2019թ.